

ԺԱՄԱՆՍԱԿԱԿԻՅ ՄԱԿԵԴՈՆԻԱՆ

Բարկանեան թերակղզու վրայ կատարուող անցքերն աւելի ու աւելի անհանգիստ բնաւորութիւն են ընդունում: Այն միջոցները, որոնց օգնութեամբ՝ եւրոպական խաղաղութեան ջատագով պետութիւնները մտածում էին եթէ ոչ լուծել մակեդոնական վերին աստիճանի խճճուած հարցը, գոնէ նրա սուր կերպարանքը մեղմացնել, մինչև այժմ ցոյց չը տուին այն հետեանքները, ինչ որ սպասում էին: Մակեդոնիան շարունակում է յուզուել և ներկայումս իբր վրայ է դարձնում ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը: Ուստի յարմար առիթ է մի թոուցիկ նկարագրութեամբ ծանօթացնել ընթերցողներին այդ անհանգիստ երկրի ազգաբնակչութեան հետ:

Այս խնդիրը—հեշտ խնդիրներից չէ: Ամեն-մի ուսումնասիրութիւն պէտք է ստատիստիկական տեղեկութիւնների վրայ լինի հիմնուած, մինչդեռ հէնց դժբախտաբար ստատիստիկան սաստիկ թերի է Մակեդոնիայի մասին: Պաշտօնական տեղեկութիւններ գոյութիւն չունեն. թիւբքական կառավարութիւնը ճանաչում է միայն մի ստատիստիկա—այն, որը կարևոր է պատերազմական նպատակների համար. ուստի նա միայն մահմեդական դաւանութեան պատկանող արական բնակչութեան հաշիւն է պահում. մնացած բոլորը մտաւորապէս է հաշոււմ: Աւելի լաւ չեն և՛ քրիստոնեայ ազգաբնակչութեան դպրոցական ցուցագրութիւնները և մինչև անգամ կոնսուլի տոմարագրութիւնները: Աւելի կարելի է հաւատ ընծայել մասնաւոր հաշւադրութիւններին, եթէ նրանք կազմուած լինէին բաւականաչափ զգուշութեամբ և բաւականաչափ անաշուտութեամբ: Ստորև մենք կը պատահենք այսպիսի մի քանի հաշւագրութիւնների:

Մակեդոնիային պատկանում են հետևեալ երեք թիւբքական վիլայէթները. Սալոնիկի (հարաւային մաս), Մոնաստիր

(Բիտոլ, միջին) և Ուսկիւր (Կոստոլո, հիւսիսային), որոնցից պէտք է միայն զատել Ուսկիւրի վիլայէթի Նորբազարի սանջակը, որը գտնուում է Աւստրո-Ունդարիայի ազդեցութեան շրջանում և մոնաստերիեան վիլայէթի էլլբասանի սանջակը, որը միացրուած է այդ վիլայէթին ադմինիստրատիւ պատահական հիմքերով, բայց սերտ կապուած է հարեան Ալբանիային: Մակեդոնիային սովորաբար միացնում են՝ այսպէս ասուող՝ Հին-Սերբիան, այսինքն Պրիզրենդի, Պրիշտինի և Իպեկի սանջակները, Սերբիայի սահմանում գտնուող նահանգը: Մակեդոնիայի ազգաբնակչութիւնը կազմուած է՝ ըստ թիւրքական պաշտօնական տեղեկութիւնների (Սալմանի 1899 թ. օրացոյցը) 2,244,000 մարդուց: Եթէ այս թւից հանենք Նորբազարի, էլլբասանի սանջակների ազգաբնակչութիւնը, կը ստացուի 2,000,000-ից քիչ աւել մի թիւ: այդ բաւական քիչ է, քան իրականապէս է: Սպիրիդոն Գոպչևիչը հաշուում է 2,880,000, Նիկոլայիդէսը—2,226,500, Հուզօ Գրոտէն (Beil. z. Allg. Ztg. 1903, № 96)— $2\frac{1}{2}$ — $2\frac{3}{4}$ միլիոն, բոլգար Վասիլի Կընչևը (առանց Հին-Սերբիայի)—2,307,000 մարդ: Վերջին թիւը աւելի ճիշտ է համարում և՛ Պ. Ն. Միլիկովը (Миръ Божій, 1900, № 1):

Ինչպէս տեսնում է ընթերցողը, ընդհանուր թւի հարցում համարեալ բոլորը համաձայն են միմիանց հետ. բայց այս համաձայնութիւնը խախտուում է, երբ արդէն այս թիւը բաժանում են առանձին ազգութիւնների վրայ: Այստեղ ուսումնասիրողների հայրենասիրութիւնն է գործում, և նրան զո՞հ են բերում մնացած բոլոր հայրենիքը: Այս տեսակ կլասսիկ օրինակ է սերբ Սպիրիդոն Գոպչևիչի ստատիստիկան: Մինչդեռ Կընչևը երկու դաւանութիւններին պատկանող սերբերի թիւը համարում է 1,000 մարդ, Գոպչևիչը հաշուում է 1,686,300. Կընչևը յոյներին հաշուում է 229,600, իսկ յունական ազգագրագէտներ Նիկոլայիդէսը և Կացացիսը—950—700 հազար: Պարզ է, որ պատահմամբ չեն աճում և կրճատում այդ առանձին թւերը զանազան ազգութիւններին պատկանող ուսումնասիրողների ձեռքում: Այս բոլոր մանիպուլացիաներն ունեն միանգամայն որոշ և ակնյայտնի քաղաքական աստատ: Եւրոպական թիւրքաժող հրապարակասանները, յոյները, բոլգարները, սերբերը—բոլորն էլ աշխատում են ապացուցուցանել, որ ամբողջ Մակեդոնիայում կամ գոնէ նրա մի մասում գերակշռում է այս կամ այն ազգութիւնը: Նրանց ոչ մէկի համար ազգագրութիւնը an und für sich մեծ հետաքրքրութիւն չէ ներկայացնում: Եթէ—դատում են նրանք,—ազգաբնակչութեան մեծամասնութիւնը պատկանում է այս կամ այն ազգութեանը, այն ժամանակ այդ երկիրը կամ նրա մասը

պէտք է միացնել համապատասխան պետութեանը: Բայց ոչ բոլոր քաղաքագէտ-ազգագրագէտներն են հաւասարաչափ համարձակութիւն ցոյց տալիս: Բողոքները, որոնք կազմում են Մակեդոնիայի ազգաբնակչութեան կէսը, պահանջում են երկրի «ամբողջկանութեան» պահպանումը և հակառակ են ամեն մի բաժանման: Բողոքական ոչ բոլոր հրապարակախօսներն ու հասարակական գործիչներն են համաձայն միմիանց հետ այն հարցում, թէ ինչ պէտք է անել «ամբողջական» Մակեդոնիան: Միքանիաները ցանկանում են միայնել Բողոքիային sans phrases, միւսները պահանջում են միայն կազմել մակեդոնական ատոնում զենեքալ—նահանգապետութիւն, ինչպէս Կրետէն: Նրա մայրաքաղաքը որոշուած է.—այդ Սալոնիկին է: Հէնց նորերումս էր, որ այդ պաշտօնի համար կար և՛ թեկնածու—Պետիօ Կարաւելովը, որն այժմ դժբախտաբար մեռած է: Յոյները, ըստ երեկոթին՝ նոյնպէս և՛ սերբերը, որոնք քաջուած են պահանջել «ամբողջականութիւն», ամեն կերպ ընդհամարում են բոլորական սիրած իդէալին: Նրանք ջանկանում են, որ Մակեդոնիան, նրա հետ միացնելով և՛ Հարաւային էպիրոսը (Նանինի և Արգիրոկատրի սանջակները), կազմէ երեք տասնձին զենեքալ—նահանգապետութիւն—կոստովեան կամ հին-սերբիական՝ ունենալով Ռակիւբը բեգլիբենցիա, սալոնիկեան կամ հարաւ—մակեդոնեան՝ զերակչոսոյ յունական ազգաբնակչութեամբ և օլբրիզեան՝ զերակչոսոյ սլաւոնական ազգաբնակչութեամբ (տես գր. Կապնիստի նամակը «Русская мысль»-ում, 1903, II): Ինչ վերաբերում է եւրոպացի թիւրքամոլ հրապարակախօսներին, որոնք խիստ քաղամացի են Գերմանիայում այն ժամանակից, երբ Վիլհելմ II-ը Կ.—Պոլիս այցելեց, նրանք այս զրոյցները համարում են միանգամայն անպէտք և համոզուած են (անէկզծ թէ կեղծ—դժուար է վճռել), որ թիւրքական իշխանութեան ներքոյ մակեդոնական ազգաբնակչութիւնը չափազանց լաւ է ապրում, — այնպէս որ ոչ Բողոքիան, ոչ էլ Յունաստանը երբէք չեն կարող գոյութեան աւելի լաւ պայմաններ ստեղծել նրա համար, քան թիւրքիան: Allg. Ztg.-ում՝ օրինակ՝ գործում է գերմանացի թիւրքամոլ ժուրնալիստների նորելուկ թայֆայի տիպիկ ներկայացուցիչ Հուգօ Գրոսսէն, որը շատ է պարծենում այն բանով, թէ Մակեդոնիայում անձամբ է եղել: Եւ անա հետաւոր ճանապարհորդութիւնից վերադառնալով՝ նա պատմաբանում է.

Երկրում կարեւոր ապահովութիւն չը լինելու մասին եղած լուրերը սաստիկ չափազանցրուած են ներկայացուած: Ոչ մի տեղ առիթ չեմ ունեցել նկատելու, որ առեւտրական յարաբերութիւնները և երկրի զանազան մասերի միջև եղած հաղոր-

դակցութիւններն զգալի վնաս կրէին կարգի խանդարման և հասարակական պահպանութեան պահպանութեան պատճառով... Հէքիաթները այն զազանութիւնների մասին, որոնց ենթարկուեմ են քրիստոնեաները թիւրքերի կողմից, ինչպէս հաղորդուեմ է Agence Bulgairé՝ Եւրոպայից թագցնելու նպատակով սպստամբութեան իսկական բնաւորութիւնը, վերջին ժամանակ քիչ լռել են: Ես ինքս առիթ եմ ունեցել ստուգելու, որ այդ բոլոր բուրբուրեմ լուծուող է չինուած... Այն նեղութիւնները, որոնց ենթարկուեմ է մակեդոնական ազգաբնակչութիւնը, առաջ է բերել ինքը յեղափոխական շարժումը:

Բայց ահա թէ ինչ է ասուեմ մի ուրիշ թիւրքամով, այս անգամ Փրանսիացի՝ Վիկտոր Բերտոը՝ Մակեդոնիային նուիրած իր հոչակաւոր գրքում.

Մակեդոնիայում թագաւորուեմ է ամենախիսկական արգարութիւնը, որը միացած է ամենախիստ օրինական բեժիմի հետ: Միայն թիւրքական իշխանութեան պահպանութիւնը կարող է սպանակի այն յարգանքը, որ տաւուեմ է զէպի ցեղի և ազգութեան մեծ սկզբունքները, որոնց վրայ են հիմնուեմ, որպէսզի թիւրքերին երկրից արտաքսելու պահանջներն արգարացնեն... Միայն թիւրքիան այնքան ինդիֆերենտ է, որ արգելք չի լինուեմ բոլոր լեզուների, բոլոր կրօնների գոյութեանը:

Այս բոլոր ազգաբարումները՝ իհարկէ՝ պէտք է ընդունել cum grano salis: Թիւրքիայի գոյութիւնը նոր չէ, և մենք շատ լաւ գիտենք, թէ ենչ բան է «օրինական բեժիմը», որ թագաւորուեմ է նրա գաւառներում: Թիւրքամոնիներին շատ չէ գուր գալիս մակեդոնական կամիտեալի գործունէութիւնը, և շատ է գուր գալիս այն պատրաստակամութիւնը, որով սուլթանը համաձայնուել է բեֆորմներ մտցնելու: Նրանք կարծուեմ են, որ այս ֆական ինքնըստինքեան լուծուեմ է բոլոր գժուարութիւնները, և մինչև անգամ աւելորդ են համարուեմ մի փոքր քննել-հասկանալ բեֆորմների բովանդակութիւնը: Մինչդեռ այդ առաջին օրինակը չէ, երբ թիւրքիան հանգստացնուեմ է պետութիւններին՝ բեֆորմներ մտցնելու համաձայնութեամբ: Մեր առջևն է Հայաստանի վիճակը (զբութիւնը), այն Հայաստանի, սրաեղ նոյնպէս բեֆորմներ կան, և որի ազգաբնակչութեան զբութիւնն աւելի լաւ չէ, քան մինչև այդ բեֆորմները:

Սուրայն ժամանակ է ընդհանուր նկատողութիւններից անցնել Մակեդոնիայի գանազան ազգայնական խմբերի իսկական յարաբերութիւնները վերլուծելու այնպէս, ինչպէս այդ ներկայանուեմ է մեզ աւելի բարեխիղճ ուսումնասիրողների խօս-

քերից: Մեր հաշիւն հիմք է ծառայում կընչեի հաշիւը, բայց մենք նրա հաշեկշռին զուգընթաց կը բերենք ուրիշ ուսումնասիրողների թւահամարներ: Գուպեիչին մենք մի կողմ կը թողնենք, որովհետեւ նա միամտութեան չափ պարզ կեղծիքներ ունի:

Եթէ հաշիւ քաշենք ըստ դաւանութեան, կ'երևայ, որ մուսուլման (մահմեդական-ուղղափառ) տարրը կազմում է երկրի ամբողջ ազգաբնակչութեան մօտ մի երրորդը, համարեա թէ 900,000 մարդ: Այս թւի մէջ են մտնում թիւրքական աստիճանաւորները, զինուորական և ուրիշ ազգաբնակչութիւնը մի քանի գլխաւոր քաղաքներում—Ուսկիւքում, Կեպրիլում, Վոդենում, Օստրովում, Մոնասաւրիում, Օխրիզում, Սարուզում: Նրանք բաւական շատ են Մեսոս գետից դէպի արևմուտք, Կաւասի ծովածոցի ափերում (Թագոս կղզու դէմ), Վարզար և Սարումնիցա գետերի մէջտեղը և Օստրովօ կղզուց դէպի հարաւ Յետոյ՝ միւս ազգութիւններին պատկանող մուսուլման տարրը, որ կազմում է ամբողջ թւի կէսը, ցրուած է ամբողջ Մակեդոնիայում: Այսպէս՝ բոլոր մուսուլմաններն ապրում են երկրի միջին ու արևելեան մասերում, Բողոպի լեռներից հարաւ և Սարում գետի վերին հոսանքի վրայ: սերը-մուսուլմաններն ապրում են Ուսկիւքից և Դիբրայից հարաւ, յոյները—Կաստորիայից հարաւ-արևմուտք, վլախները—Մոզլենում: Սրանց թւին են պատկանում՝ իհարկէ՝ և՛ արնատաները, որոնք բաւական շատ են մահաւանդ Դրինայի և Վարդարի վերին հոսանքների վրայ, և զընչուների մի մասը:

Հրէաներ Մակեդոնիայում բաւական շատ կան: Նաումանը նրանց թիւը ցոյց է տալիս 66,000, Կընչեր—67,000:

Ըստ ազգութիւնների բաժանելն աւելի դժուար է: Կընչեր բոլոր դաւանութիւնների բոլգարներին հաշուում է 1,235,000, որ ամբողջ ազգաբնակչութեան մօտ կէսն է դառնում, Նիկոլայիդէսը—427,000, իսկ Գրոտէն—մինչև անգամ 250,000: Վերջին երկու թւանշաններն ակնյայտնի կերպով նուազեցնում են բոլգարների քանակը: Մակեդոնիայում յոյների քանակը խիստ նուազել է յոյն-թիւրքական պատերազմից յետոյ, որն այնպիսի ծանր հարուած հասցրեց հելլենական ազգի բարոյական պրեստիժին (ազգեցութեանը): Մենք վերը տեսանք, որ յունական ազգազբրոզներն էլի աճագին թւանշան են ցոյց տալիս—մինչև 700,000, Գրոտէն մի փոքր աւելի չափաւոր—500-600 հազար, որ նոյնպէս իսկական թիւը մեծացնում է երկու անգամից աւելի: Սերբերը կազմում են չնչին մաս, Կընչեր նրանց հաշուում է 1,000 հոգի, որ գուցէ մի քիչ պակաս է իսկականից, բայց մինչև անգամ Նիկոլայիդէսի թիւը—9,831—չափազանցրած է թւում:

վրահներին թւի որոշումը դժուարութիւններ չէ յարուցանում. բոլորը նրանց հաշոււմ են 75—80 հազար հոգի:

Առանձին ազգութիւնների՝ վիլայէթների և սանջակների համեմատ՝ բաժանումն աւելի դժուար է որոշել, և թւանշաններն այստեղ ակամայից աւելի քիչ մօտաւորական կը լինեն: Ընդհանուր ֆակտն այն է, որ բոլգարական ազգաբնակչութիւնը դէպի հարաւ դառնում է աւելի ու աւելի նօսք և թեւալիային կից Սերվիեան սանջակում բոլորովին չքանում է: Բայց մինչդեռ բոլգարները Սալոնիկի վիլայէթի սանջակների մեծամասնութեան մէջ կազմում են աչքի ընկնող տարրը, յոյները համարեա չքանում են Մոնաստըրիի և Ուսկիւբի վիլայէթներում:

Կայ նաև մի ուրիշ եղանակ ապացուցելու այս կամ այն ազգութեան՝ Մակեդոնիայի վրայ իրան իրաւունք ունենալու օրինաւոր լինելը. այդ—պատմութիւնն է: Բայց եթէ այսքան կասկածներ են յարուցանում ստատիստիկական տեղեկութիւնները, որոնք գոնէ թէօրիայով կարող են ստուգուել, աւելի մեծ կասկածներ են յարուցանում պատմական ֆակտերը: Բալկանեան թերակղզու պատմութիւնը շատ քիչ է ուսումնասիրուած. նրա մանրամասնութիւնները, որոնք ահագին նշանակութիւն ունեն այդպիսի էպպէս քաղաքական վէճերի ժամանակ, համարենք բոլորովին չեն մշակուած: Ուստի և պատմական տեղեկութիւնների հիման վրայ վերլուծելը դառնում է շատ դժուարին: Համեմատական լեզուաբանութեան գործն աւելի որոշ է: Տիրապետող կարծիքը մակեդոնական բարբառների մեծամասնութիւնը համարում է բոլգարական լեզուի արևմտեան գաւառաբարբառներ. նրանք սերբիական լեզուի հետ շատ քիչ առնչութիւն ունեն:

Այս է ընդհանուր առմամբ այն երկրի դրութիւնը, ուր ամբողջ Եւրոպան ներկայումս յուզող անցքերն են կատարուած: Թէ տեղագրութիւնը, ազգագրութիւնը և լեզուագիտութիւնը ինչ չափով կարող են որոշել մակեդոնական հարցը, դժուար է ասել, որովհետև վերջին խօսքը նրանց չէ պատկանում, այլ յամենայն դէպս այն ուժին, որը տոկունութեամբ և էներգիայով առաջ է տանում վերջին ժամանակներս խաղաղութեան դադափարը—վերջին խօսքը պատկանում է եւրոպական քաղաքականութեանը:

(„Русск. Вѣд.“)